Ամերիաբանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և «Yo Health»-ի համատեղ արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող Yo Health հավելվածի 18 տարին լրացած այն օգտատերերը (այսուհետ՝ Օգտատեր), որոնք 2025թ. հոկտեմբերի 17-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ (այսուհետ՝ Արշավի գործողություն), Yo Health հավելվածում առկա հղմամբ գրանցվելով, հեռավար եղանակով կդառնան Բանկի հաճախորդ, կբացեն հաշիվ և կպատվիրեն Mastercard Standard տեսակի քարտ, 2 աշխատանքային օրվա ընթացքում իրենց Yo Health օգտահաշվին կստանան 500 000 քայլ:

Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.

- Օգտատերը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ 2025թ. հոկտեմբերի 17-ից մինչև 2025թ.դեկտեմբերի 31-ը ներառյալ,
- Քայլերի տրամադրման պահին Օգտատերը պետք է հանդիսանա Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Օգտատերը 2025 թվականի հունիսի 1-ից սկսած, ինչպես նաև Արշավի գործողության ընթացքում չի դադարեցրել և վերսկսել Բանկի հետ գործարար հարաբերությունները: